

Սուր մ'երկսայրի, սուր մ'անպատեան, սուր մ'անբիծ,  
 Եւ Աստուծոյ պէս արդար:  
 Այն ատեն հոն մարմարիոնին խորշին մէջ  
 Զընացող օձն արթընցաւ  
 Եւ փաթթելով զինք մեղմօրէն այդ զէնքին՝  
 Կաթիլ կաթիլ ըսկըսաւ թոյն մը կաթել:

Օ՛ն, հարուա՛ծ մ'ալ, հարուա՛ծ մ'ալ դեռ, եւ ահա  
 Պիտի գործն այդ աւարտի:  
 Բանդակագործ քերթողն յանկարծ խորշումեց  
 Մարգարտապսակ ճակատը ջինջ քըրտինքով.  
 Այդ ի՞նչ արձան, անունն ի՞նչ էր այդ կընոջ.  
 Գորգոնա՞ մ'եր, Յերա՞ն քինոտ, թէ Իսիս.  
 Պատուանդանին վրայ հըսկայ  
 Փորագրեց. – Նեմեսիս:  
 Ահա երազն իր, կը շընչէր, կը խորհէր.  
 Իր երազն այդ մարմարեղէն՝ զոր երկար  
 Ատեն սըրտին հանքերուն մէջ ան կըրեց:  
 Արդարութեան եւ Վրեժի  
 Դիցուհին այդ՝ աղջիկն էր իր կորովին  
 Չոր յըղացաւ, ողնածուծովը սընոյց  
 Այն օրէն վեր՝ երբ հըլութեամբ հարսնացաւ  
 Ժողովուրդին արեան հետ  
 Գիտակցութիւնն իր բեղուն:  
 Այլեւս ի՞նչ փոյթ թէ մնաց թաղուած օրերով  
 Արուեստանոցին դամբանական մութին մէջ:  
 Ի՞նչ փոյթ թէ արդ ճակատէն վար կը հոսի  
 Բարի քըրտինքն յոգնութեան,  
 Եւ ուսերուն եւ գըլխուն վրայ սեւահեր՝  
 Իբրեւ ըլլար ջաղացպան մ'ան՝ կը նըստի  
 Ճերմակ փոշին մարմարին.